

Մրցույթի հայտարարություն

«Լիճքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ»-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն՝ «Լեհվազի միջնակարգ դպրոց», «Վարդանիձորի միջնակարգ դպրոց» և «Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ «Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը,
- 2) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայություն:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
- 2) ՀՀ քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտի պատճեն,
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճեն,
- 4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, (այդ թվում էլ եկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին:
- 5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 13:00-ին, «Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Լիճք, 1-ին փողոց, 2-րդ փակուղի, շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել 098 05-97-11, 093 88-29-34 հեռախոսահամարներով, էլ. հասցե՝ litchq@schools.am: